ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 26—27-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Խ. Հարությունյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Գ. Ա. Արզումանյանը, ՀԿԿ կենտկոմի քարտուղարներ Պ. Պ. Անիսիմովը և Ս. Ս. Թովմասյանը: Ընդհանուր ժողովը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: Նա ասաց, որ 1973 թ. մեր երկրի պատմության մեջ մտավ որպես 9-րդ հնգամյակի պլանների իրագործման, ՍՄԿԿ XXIV համագումարի պատմական որոշումների հետագա կենսագործման տարի: Անցած տարվա հաջողությունների և նվաճումների մեջ իրենց ավանդն ունեն նաև Հայաստանի գիտնականները: ՀՍՍՀ ԳԱ հիմնարկներում մշակվել է 475 թեմա ընդգրկող 138 պրոբլեմ: Լուրջ արդյունքներ են ձեռք բերվել բնական գիտությունների բնագավառում:

Այնուհետև Վ. Հ. Համբարձումյանը կանգ առավ հասարակական գիտությունների բնագավառում կատարված դգալի աշխատանքների վրա և ընդգծեց դրանց կարևորությունը մեր հասարակության կյանքում: Նա մասնավորապես նշեց, որ սովետահայ պատմաբանները պետք է արժանավայել դիմավորեն Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման 150-ամյակը: Նա միաժամանակ ընդգծեց, որ անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել դիտական մշակումները պրակտիկայում արմատավորելու գործին, ակտիվացնել ակադեմիայի բաժանմունքների գործունեությունը, ավելի ամրապնդել և ընդլայնել գիտական կապերը անդրկովկասյան հանրապետությունների գիտական կենտրոնների հետ: Վերջում Վ. Հ. Համբարձումյանն ասաց, որ հանրապետության գիտնականները հնգամյակի որոշիչ տարին հարվածային աշխատանքով սկսեցին: Դա հուսալի երաշխիք է, որ նրանք պատվով կկատարեն առաջադրված խնդիրները և իրենց համեստ ավանդը կներդնեն մեր երկրի տնտեսական ու գիտատեխնիկական զարգացման ծրագրի իրականացման գործում:

Հանրապետության գիտությունների ակադեմիայի 1973 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ գլխավոր դիտական-քարտուղար, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ս. Ա. Բակունցը: Նա ընդգծեց, որ 1973 թ. ՀՍՍՀ ԳԱ գիտական և գիտակազմակերպչական գործունեությունը ընթացել է գիտության արդյունավետությունը բարձրացնելու, բնական և հասարակական գիտությունների բնագավառում ֆունդամենտալ հետազոտությունները ծավալելու ու խորացնելու, գիտական կոլեկտիվների ուժերը և ուշադրությունը գիտատեխնիկական առաջընթացի առավել կարևոր և հեռանկարային ուղղությունների զարգացման վրա կենտրոնացնելու և գիտության ու տեխնիկայի նվաճումների ներդրումը մեր երկրի ժողովրդական տնտեսության մեջ արագացնելու մասին ՍՄԿԿ XXIV համագումարի դիրեկտիվները անշեղորեն կենսագործելու նշանաբանով: ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի աշխատողները հաշվետու տարում մեծ աշխատանք են կատարել իրենց առաջ դրված խնդիրները կատարելու համար: Այժմ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայում աշխատում է մոտ 6.800 մարդ, որոնցից 2585-ը գիտական աշխատակիցներ են, այդ թվում՝ 158-ը գիտության դոկտոր, իսկ 836-ը՝ գիտության թեկնածու: Զեկուցողը հանգամանորեն վերլուծեց ակադեմիայի նախագահության, նրա բաժանմունքների, հրատարակչությունների և գրադարանների գործունեությունը: Ս. Ա. Բակունցը նաև նշեց, որ ակադեմիայի մի շարք հիմնարկներ դեռևս դժվարություններ են կրում՝ կապված նյութատեխնիկական մատակարարման հետ, որը բացասաբար է անդրադառնում հետազոտական աշխատանքի մակարդակի ու տեմպերի վրա: Զգալիորեն թերակատարվել է կապիտալ շինարարության պլանը:

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն: Գիտա-հասարակական անխոնջ և բեղմնավոր գործունեության համար «Մեծարման գիր» ստացան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Կ. Ն. Պաֆենգոլցը, Է. Հ. Հասրաթյանը և

պատմական գիտությունների դոկտոր Կ. Գ. Ղաֆադարյանը: Գիտությանը մատուցած մեծ ծառայությունների համար «Վաստակագրով» պարգևատրվեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Կ. Կարապետյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Տ. Ղանալանյանը, տեխնիկական գիտությունների թեկնածու Գ. Ս. Միհասյանը, քիմիական գիտությունների թեկնածու Հ. Տ. Եսայանը, երկրաբանական-հանքաբանական գիտությունների թեկնածու Դ. Պ. Բաղդասարյանը:

1973 թ. արժեքավոր գիտական հետազոտություններ կատարած և պրակտիկայում մշակումների արմատավորմանը մասնակցած մի խումբ գիտնականներ արժանացան «Գովեստագրի»:

ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովում գիտական զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Մ. Ղարիբյանը և հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Ն. Առաքելյանը: Գ. Մ. Ղարիբյանի զեկուցումը նվիրված էր նյութի և բարձր էներգիաների մասնիկների էլեկտրատեխնիկական փոխհարաբերությունների հարցերին, իսկ Բ. Ն. Առաքելյանի զեկուցումը՝ Հայկական ՍՍՀ-ում կատարված հնագիտական պեղումների արդյունքներին:

Ընդհանուր ժողովում քննարկվեց նաև ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ինստիտուտների կանոնադրությունը. որոշվեց կանոնադրության նախագիծը մշակելու և խմբագրելու համար ՀՍՍՀ ԳԱ փոխ-պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանի նախագահությամբ ստեղծել հանձնաժողով և նախագիծը մշակելուց ու արված դիտողությունները հաշվի առնելուց հետո ներկայացնել ՀՍՍՀ ԳԱ նախագահության հաստատմանը:

Ակադեմիայի ընդհանուր ժողովը ընտրեց ՀՍՍՀ ԳԱ նախագահության նոր կազմ: Դրանով ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովն ավարտեց իր աշխատանքը:

ՀՍՍՀ ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 21-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ժողովը: Բաժանմունքի գիտական հիմնարկների 1973 թ. կատարած աշխատանքների մասին հաշվետու զեկուցումով հանդես եկավ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանը: Նա ասաց, որ բաժանմունքի գիտական հիմնարկները 1973 թ. հաշվետու տարում կարևորագույն և արդիական պրոբլեմների մշակման ուղղությամբ կատարել են արդյունավետ աշխատանք: Հաշվետու տարում ղեկավարվելով ՍՄԿԿ XXIV համագումարի և ՍՄԿԿ Կենտկոմի պլենումների պատմական որոշումներով, բաժանմունքի գիտական հիմնարկների գիտաշխատողները 1973 թ. հնդամյակի վճռական տարի դարձնելու նշանաբանով զգալի աշխատանք ծավալեցին հասարակական զարգացման տեսական պրոբլեմների մշակման, կյանքի երևույթները մարքսիստական-լենինյան մեթոդոլոգիայով և ստեղծագործական մոտեցմամբ բացատրելու ուղղությամբ:

Բաժանմունքի գիտական հիմնարկների ղեկավարները, գիտական խորհուրդները, կուսակցական ու հասարակական կազմակերպությունները վերանայելով գիտահետազոտական աշխատանքների, ինչպես նաև 20-ամյա հեռանկարային պլանները, ճշտեցին գիտական ուղղությունները, կարևորագույն պրոբլեմներն ու արդիականության պահանջները:

Ծ. Պ. Աղայանը նշեց, որ հաշվետու տարում բաժանմունքի 8 ինստիտուտները մշակել են 48 գիտական պրոբլեմ, որոնք ընդգրկում են 191 թեմա: Այնուհետև զեկուցողը հանգամանորեն վերլուծեց բաժանմունքի գիտական հիմնարկների և բյուրոյի գործունեությունը: Նա նկատեց, որ հաշվետու տարում 7 թեմաներ մնացել են անավարտ, որոշ ինստիտուտներ դանդաղում են անդրկովկասյան հանրապետությունների համապատասխան ինստիտուտների հետ գիտական համագործակցության և սոցիալիստական պարտավորությունների կնքման հարցում:

Զեկուցման վերջում Ծ. Պ. Աղայանը նշեց, որ 1974 թ. բաժանմունքին պարտավորեցնում է ավելի մեծ եռանդով աշխատել հանուն սովետական գիտության հետագա զարգացման ու առաջընթացի, հանուն մեր երկրի է՛լ ավելի բարգավաճման ու հզորացման:

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին ակադեմիկոս Ա. Ս. Ղարիբյանը և պատմական գիտությունների դոկտոր, արևելագիտության ինստիտուտի դիրեկտոր Գ. Խ. Սարգսյանը:

Ա. Ս. Ղարիբյանն ասաց, որ հաշվետու տարում բաժանմունքի գիտական հիմնարկները հասել են զգալի նվաճումների, որոնց հետագա զարգացումը կախված է նաև հրատարակչական և տպարանային գործի բարելավումից։ Նա նաև կանգ առավ դպրոցները բարձրորակ դասագրքերով ապահովելու հարցի վրա։

Գ. Խ. Սարգսյանն անդրադարձավ արևելագիտության ինստիտուտի խնդիրներին։ Նա ասաց, որ կարող ուժերի առկայությունը հնարավորություն է տալիս ստեղծել կովկասագիտության բաժին, որը կհանդեցնի Հայաստանում կովկասագիտության զարգացմանը։ Նա այնուհետև ընդգծեց ինստիտուտի գիտաշխատողներին արտասահմանյան գիտական գործուղումներ տալու և ինստիտուտի գիտական գրադարանը հարստացնելու անհրաժեշտությունը։

Վերջում «Սոցիալիզմի քաղաքատնտեսությունը սոցիալիստական էկոնոմիկայի տեսության և պրակտիկայի առաջատար օղակն է» զեկուցմամբ հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանը։

Դրանով ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ժողովն ավարտեց իր աշխատանքը։